ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2025 թվական, N 46-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՃԿԱՆ ԳՅՈՒՂ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 0.09915 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 236 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, 38-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից 01/04/2025թ. տրված թիվ 13 գրությունը, ՀՈԱԿ-ի պետական ռեգիստրի վկայականը, համայնքի սեփականության իրավունքի N 26122022-06-0004 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, Ճոճկան գյուղ, 5-րդ փողոց, 4 հասցեում գտնվող, բժշկական ամբուլատորիայի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած՝ 0.09915 հեկտար մակերեսով, կադաստրային 06-069-0082-0003 ծածկագրով հողամասը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 26122022-06-0004) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Լոռու մարզի «ՃՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ
ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ
ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ
ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ
ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ
ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՊՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի